# Արտիւշ Շահբազեան



Ծնուել է  1961թ. Փետրուարի 18-ին Երեւանում:

1984թ. աւարտել է Երեւանի Խ.Աբովեանի անուան բարձրագոյն ուսումնական հաստատութեան մշակոյթի բաժինը` «Թատրոնի բեմադրիչ» մասնագիտութեամբ:

1990թ. ընդունուել է Հայ Յեղափոխական Դաշնակցութեան շարքերը: 1990թ. աշխատել է ՀՅԴ Մամլոյ եւ տեղեկատու կենտրոնում` որպէս լրագրող, գրասենեակի քարտուղար, 1991-1994թթ.` ՀՅԴ Բիւրոյի «Ազատամարտ» պաշտօնաթերթում` խմբագիր, քաղաքական բաժնի պատասխանատու, խմբագրապետի տեղակալ: 1994-1996թթ. աշխատակցել է ՀՅԴ Բիւրոյի «Դրօշակ» պաշտօնաթերթին եւ ՀՅԴ այլ պարբերականների:

1990-2006թթ. բազմիցս ընտրուել է ՀՅԴ Հայաստանի Կենտրոնական Կոմիտէի եւ Գերագոյն Մարմնի անդամ:

2007թ. մայիսի 12-ին ԱԺ պատգամաւոր է ընտրուել  համամասնական ընտրակարգով ՀՅԴ կուսակցութիւնից:

Ամուսնացած է, ունի երեք երեխայ: